ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՆԻՍՏԻ

<<28>> ապրիլի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի ապրիլի 28-ին ժամը 11^{00} –ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱՐԻՆԵ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ 7 մանդատ ստացած, Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱՋԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,

7.ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 2 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ 1 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անիի համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցները, Անի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենները:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի գործավար՝ Սաթենիկ Սահակյանը:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը.

Օրակարգ-1

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2023 թվականի ապրիլի 28-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու խմբակցությունները ստեղծելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման հերթական նիստերի օրը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 117-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան):

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2023 թվականի ապրիլի 28-ի նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2023 թվականի ապրիլի 28-ի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու խմբակցությունները ստեղծելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման հերթական նիստերի օրը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 117-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-2:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու խմբակցությունները ստեղծելու մասին:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին են բաժանված համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց ծանոթանալ, քննարկել և առաջարկությունների ու դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկություններ ներկայացվեցին ընդունել համայնքի ավագանու որոշումը:

Առաջարկվեց քվեարկել, կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը նշեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթով, հիմք ընդունելով Թիվ 33

տրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 2-ի «Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներով Անի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 12-Ա որոշման և 2023 թվականի ապրիլի 6-ի <<Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին>> N 12 արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝

1) <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության խմբակցություն,

2) <<Ազգ-համայնք>> կուսակցությունների դաշինքի խմբակցություն,

3) <<Հայկական երազանք>> կուսակցության խմբակցություն,

4) <<Իմ հզոր համայնք>> կուսակցության խմբակցություն:

2. Առաջարկել Անի համայնքի ավագանու խմբակցություններին համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել՝ խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անուններն ու ազգանունները և այն հրապարակել համայնքի ավագանու առաջիկա նիստում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-3:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին.

Զեկուցողը նշեց, որ համայնքի ավագանու անդամներին բաժանված են համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Խնդրում եմ քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Ավագանու անդամ Արտակ Շաբոյանը տեղեկատվություն ներկայացրեց, որ 2023 թվականի մայիսի 25-ին Սառնաղբյուր բնակավայրում ավանդաբար նշվում է <<Սառնաղբյուրի հերոսամարեի>> տարելիցը, որին մասնակցում են ինչպես Անի համայնքի, այնպես էլ Շիրակի մարզի և հանրապետության տարբեր բնակավայրերի բնակիչներ: Առաջարկություն ներկայացվեց համայնքի ավագանու մայիս ամսի հերթական նիստը տեղափոխել 2023 թվականի մայիսի 24-ին՝ չորեքշաբթի օրը:

Քվեարկության արդյունքում համայնքի ավագանին ընդունեց առաջարկությունը:

Առաջարկություններ ներկայացվեցին արված առաջարկությամբ ընդունել համայնքի ավագանու որոշումը:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր սահմանել յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին:

2. Հաշվի առնելով, որ 2023 թվականի մայիսի 25-ին Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում ավանդաբար նշվում է <<Սառնաղբյուրի հերոսամարեի>> տարելիցը, բացառության կարգով, 2023 թվականի մայիս ամսի հերթական նիստն անկացնել 2023 թվականի մայիսի 24-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-4:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որաշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առակայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի1-ին մասի 4-րդ կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

գավարի վարձատրության չափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 70.9 տոկոս՝ 590000 /հինգ հարյուր իննսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-5:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 117-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առակայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկություն ներկայացվեց՝ հաստիքացուցակից հանել գնումների բաժին առանձնացված ստորաբաժանումը և երեք համայնքային ծառայության պաշտոններ՝ մեկ գլխավոր մասնագետ, երկու 1-ին կարգի մասնագետ, ներառել կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության մասնագետների ցանկում:

Առաջարկությունը ընդունվեց համայքի ավագանու կողմից:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

5. Սույն որոշումն 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային քաղաքական, համայնքային հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմի մասով որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-6:

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Տեղեկացվեց, որ նախագիծը քննարկվել է Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետ և որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի

անրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-9 հավելվածների:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգի-7:

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանու անդամ Հասմիկ Զատիկյանի կողմից առաջարկություն ներկայացվեց Մարալիկի արվեստի դպրոցի ազգագրական երգի և աստունքի խմբակներ հաճախող սաների ամսական վճարի չափը հավասարեցնել մյուս խմբակների հաճախող սաների համար սահմանված վճարի չափին, սահմանել միասնական սակագին՝ 1000 դրամ:

<<Անիի կոմունալ տնտեսության>> համայնքային բյուջետային հիմնարկի տնօրեն Արթուր Կարապետյանի կողմից առաջարկություն ներկայացվեց՝ համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման համար նախատեսված <<5000>> դրամի փոխարեն սահմանել <<10000>> դրամ, իսկ համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների և զորանոցների մասով մեկ քառակուսի մետրի համար սահմանված <<3>> դրամը փոխարինել <<8>> դրամով, արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի շինությունների մասով՝/այդ թվում ավտոկայանատեղի/՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար սահմանված <<8>> դրամը և <<5>> դրամը փոխարինել համապատասխանաբար՝ <<10>> և <<7>> դրամով:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանու կողմից ներկայացված առաջարկություններն ընդունվեցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 107-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 21-րդ կետերով, 88-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետով, <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով,<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի և Անի համայնքի բնակավայրերի 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու միասնական դրույքաչափերը համաձայն N 1 հավելվածի:

2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 95-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 107-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Օրակարգի-8:

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առկայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. ՍահմանելՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Օրակարգի-9:

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը: Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առակայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Էդգար Սուրենի Սաղաթելյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Օրակարգի-10:

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առակայության

դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Զորիկ Հրաչի Խաչատրյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

Օրակարգի-11:

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Առաջարկվեց քննարկել, առաջարկությունների և դիտողությունների առակայության դեպքում ներկայացնել առաջարկություն:

Առաջարկվեց քվեարկել. կողմ, դեմ, ձեռնպահ:

Զեկուցողը հայտարարեց, որ ձայների հետևյալ համամասնությամբ համայնքի ավագանու որոշումն ընդունված է. կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N .. որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել՝ 2023 թվականի մայիսի 24-ին, ժամը 11:00-ին:

2. Համայնքի ավագանու նիստն անցկացնել մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ,

ադաթյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող Անիի համայնքապետարանի վարչական շենքի միստերի դահլիճում,:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Զեկուցողը ամփոփելով համայնքի ավագանու նիստը, շնորհակալություն հայտնեց ավագանու անդամներին և հրավիրված անձանց մասնակցության համար, հայտարարեց, որ օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
ՆԱՐԻՆԵ ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ **ՍԱԹԵՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

<<28>> ապրիլի 2023 թվական